Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՔՍԵՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ՈՉ ՈՒՂՂԱՓԱՌ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2009

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Ն 406

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Արևելահայերենի փոխադրեց **Ս. Մայիլյանը**
Խմբագիր՝ **Ֆ. Կաբաղյան**

Նարեկ եպս. Ալեքսեզեան
Ն 406 Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ պատասխանները ոչ ուղղափառ առարկութիւններու: -Եր., ԵՊՀ հրատ., 2009 թ., 66 էջ:

ԳՄԴ 86.37

ISBN 978-5-8084-1064-0

© ԵՊՀ հրատարակչություն, 2009 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս, կրոնական շատ շրջանակներում դավանաբանական և վարդապետական տարբերությունների շուրջ ծագում են վիճաբանություններ, որոնք հաճախ դիտվում են որպես միջնադարյան վեճերի ապարդյուն ներկայացումներ: 1960-ական թվականներից ի վեր զարգացող միջեկեղեցական փոխհարաբերությունների ջերմությամբ աչքի ընկնող ժամանակաշրջանում, բնականաբար, արծարծվող այս վեճերը հաճախ ականահարում են քրիստոնեական հարանվանությունների միջև զարգացող փոխհարաբերությունների ու երկխոսությունների շինիչ գործընթացը: Թեև բուռն հակաճառությունների դարերը արդեն պատմության գիրկն են անցել, բայց և այնպես, քրիստոնյա եկեղեցիների միջև գոյություն ունեցող տարբերակումները այսօր էլ կենսունակ են:

Վերջին տարիներին, Հայաստանում, մասամբ էլ ամենուր, ականատես ենք դառնում քրիստոնեական ծայրահեղ հոսանքների և աղանդավորների վերընձյուղման ընթացքին: Դժբախտաբար, այս խմբակցությունները, իրենց մոլար վարդապետությունները տարածելու ջանքերի մեջ ենթարկվում են նախաէկումենիկ օրերի բանավիճային փորձություններին: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու[1] հավատացյալները, երբեմն դավանաբանական-վարդապետական գիտությունների բնագավառին քաջածանոթ չլինելով, հաճախ են հայտնվում այդ մարդորսների ճիրանների մեջ: Ընկնելով այդ թյուր հոգեվիճակի մեջ և կարծելով, թե

Քրիստոսին, փրկությունը, հավիտենական կյանքը, ճշմարտությունը մինչ այդ ճիշտ չեն ընդունել, նրանք հեռանում են Մայր Եկեղեցուց:

Այս գրքույկը պատրաստվել է հայ հավատացյալներին զինելու համար Հայ Եկեղեցու ուղղափառ պատասխաններով՝ վերևում հիշված և հաճախ աղանդավորական շաղախ ունեցող հոսանքների դեմ կանգնելու համար: Այս գրքույկով հավատացյալը նախ կիմանա, թե ինչպես, այսպես ասած, «դատապարտել» ընդդիմախոսին և հետո էլ սովորել ճշգրիտ ու Աստվածաշնչի վկայությամբ հաստատված պատասխանը: Ավելին, նա կհեռանա սխալ ու մոլորեցուցիչ ուսուցումներից և կմնա իր դարավոր քրիստոսահիմն ու հարազատ եկեղեցու ծոցում:

Անշուշտ, այս գրքույկը հին վեճերը հրահրելու նպատակ չունի և ինչքա՜ն լավ կլիներ, որ կարիքն անգամ չունենայինք այն հրատարակելու:

Մեր դավանանքում վարդապետական շատ բանաձևեր նման են այլ եկեղեցիների հավատալիքներին և, հաճախ էլ, նույնանում են նրանց հետ: Աստվածաշունչ մատյանի, Աստծու հատկանիշների, Հիսուսի անձի և առաքելության ու բազմաթիվ այլ դրույթների նկատմամբ միանշանակ վկայությունն է, որ ուզում ենք արտահայտել այստեղ: Մեր նպատակը այլ ուղղափառ եկեղեցիներին հակադրվելը չէ, այլ, մեր եկեղեցու լույս հավատը մեր ժողովրդի զավակներին բացատրելն ու նրանց նախապատրաստելն է, որպեսզի իրենց դեմ սանձազերծված պատերազմից հաղթականորեն դուրս գան և կառչած մնան մեր սրբերի և հերոսների արյամբ գնված հոգևորազգային ժառանգությանը:

Այս գրքույկը գրվել է մեզ «հերձվածող, աղանդավոր, հերետիկոս» անվանողների և Հայաստանյայց առաքելական եկեղեցու զավակների առօրյա կյանքում հավատուրացություն սերմանելու դեմ մեր հոգևոր դիրքորոշումը ճշտելու համար՝ հարց ու պատասխանի ձևով: Այն ջատագովական գրականության մեջ մեր համեստ նպաստն է և վստահաբար կարող է ծառայել ճշմարիտ հավատի պաշտպանության սրբազան նպատակին:

Նշեմ նաև, որ Նոր Կտակարանի մեջբերումները կատարվել են 1993 թ. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հրատարակած Նոր Կտակարանից, որը մինչև այժմ կատարված Նոր Կտակարանի բոլոր արդի աշխարհաբար թարգմանություններից լավագույնն է*:

Շնորհակալություն եմ հայտնում գերշ. Տ. Զարեհ Արք. Ազնավուրյանին, որ թե՛ որպես Մեծի Տանն Կիլիկիո Քրիստոնեական Դաստիարակության Բաժանմունքի վարիչ, թե՛ որպես միաբանակից եղբայր, անհրաժեշտ դիտողություններ արեց և սույն համեստ աշխատությունը հրատարակության համար արժանի գտավ:

Արդ, սիրելի հավատակից եղբայրներ և քույրեր, «զորացեք Տիրոջով և նրա զորության կարողությամբ. և Աստծու սպառազինությունը հագե՛ք, որպեսզի կարողանաք ընդդիմանալ սատանայի հնարանքներին» (Եփեսացիներին 6, 10-11):

ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵԵՄԵՋԵԱՆ

---

* Գրքույկի ներկա՝ արևելահայերեն հրատարակության մեջ, սուրբգրային մեջբերումները կատարվում են 1994 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակած Աստվածաշունչ մատյանի արևելահայերեն թարգմանությունից:

Ծանոթություն

1. *Այս գրքույկը պատրաստելիս մեր գլխավոր ուղեցույցը հանդիսացավ Անտիոքի Ուղղափառ Եկեղեցու հոգևորականների պատրաստած* Paul O'Callaghan-*ի* An Eastern Orthodox response to Evangelical claims *գիրքը (*Light and Life Publication Company, P.O.Box 26421, Minneapolis, Minnesota 55426-0421, c. 1984)*:*

2. *Կարևոր բառերի, դեպքերի, դեմքերի մասին տեղեկությունները տրված են գրքույկի վերջում՝ բառարանում:*

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ՈՉ ՈՒՂՂԱՓԱՌ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԱՎԱԴՈՒԹՅՈ՞ՒՆ ԹԵ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

Առարկություն 1.- Հայ եկեղեցին, մյուս Ուղղափառ[2] եկեղեցիների նման, շատ ավանդություններ[3] ունի, որոնք չկան Աստվածաշնչում:

Ճի՛շտ է: Հայ եկեղեցին որոշ ավանդություններ է պահում, որոնք ուղղակի և բառ առ բառ Աստվածաշնչում[4] չկան: Պողոս առաքյալը գրում է. «Հաստատ մնացե՛ք և պինդ պահեցե՛ք այն ավանդությունները, որ սովորեցիք թե՛ խոսքով, թե՛ մեր թղթով» (Բ Թեսաղ. 2, 14):

Հայ եկեղեցին հիմնվում է այս առաքելական հրահանգի վրա, երբ պահում է աստվածաշնչական ուսուցումները ու բանավոր փոխանցված ավանդությունները:

ՄԱՐԴԿԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՎԱԴՈՒԹՅՈՒՆՆԵ՞Ր, ԹԵ ԱՍՏԾՈՒ ԽՈՍՔ

Առարկություն 2.- Հիսուս դատապարտեց փարիսեցիներին[5], որովհետև նրանք Աստծու խոսքը պահելու փոխարեն հետևում էին մարդկանց կողմից հաստատված ավանդություններին: (Հիսուս հանդիմանում էր նրանց հետևյալ խոսքերով. «Եվ այդպես անարգում եք Աստծու խոսքը նույն ավանդությամբ, որ դուք փոխանցում եք միմյանց» /Մարկոս 7, 13/): Արդյոք Հայ եկեղեցին նույն սխալի մեջ չէ՞:

Հիսուն փարիսեցիներին չհանդիմանեց պարզապես ավանդությունները պահելու համար, այլ դատապարտեց ավանդությունները պահելու նրանց սխալ ձևը (հմմտ. Մարկոս 7, 9–13) և որոշ ավանդություններ Աստծու խոսքից բարձր դասելու վերաբերմունքը (հմմտ. Մատթ. 23, 23): Փարիսեցիները ավանդությունների արտաքին կողմը պահելու սխալ կեցվածքն էին ընդունել, և, միևնույն ժամանակ, նաև հեռացել էին Աստծու պատվիրանները հարգելու իմաստությունից: Հիսուս իր առաքյալներին[6] պատվիրեց պահել վավերական ավանդությունները և զգուշանալ փարիսեցիական կեղծավորությունից (հմմտ. Մատթ. 23, 1–3): Հայ եկեղեցու դիրքորոշումն էլ հենց այդ է: Հայ եկեղեցին մերժում է այն ավանդությունները, որոնք ժխտում են Աստվածաշնչի ուսմունքը և պահում է միայն այն ավանդությունները, որոնք քրիստոնեական ուղիղ հավատի արտահայտություններն են: Հայ եկեղեցին պատվիրում է իր հավատացյալներին զգուշանալ ավանդությունները պահելու փարիսեցիական սկզբունքներից և գիտակցորեն գործադրել թե՛ Աստվածաշնչի և թե՛ Հայ եկեղեցու ավանդությունների միջից ի հայտ եկող Աստծու կամքը:

ՄԱՐԻԱՄԻՆ ՊԱՇՏԵԼ ՈՐՊԵՍ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ

Առարկություն 3. – Հայ եկեղեցու որոշ ավանդություններ հեթանոսական են, ինչպես, օրինակ, Մարիամ Կույսի՝ որպես Աստվածամայր պաշտամունքը:

Նախ նշենք, որ հայ հավատացյալները Մարիամին չեն պաշտում: Մենք միայն Աստծուն ենք պաշտում: Սակայն, Մարիամը առանձնահատուկ հարգանքի է արժանի, քանի որ Աստված նրան ընտրեց Իր Միածին Որդու ծննդյան համար: Ահա այդպես Մարիամը դարձավ Աստվածամայր և իրավամբ Աստվածածին կոչվեց: Այդ պատճառով էլ նա գերադասվում է մյուս արարածներից և նույնիսկ ինքը կանխատեսում է, ասելով. «այսուհետև բոլոր սերունդները ինձ երանի կտան» (Ղուկաս 1, 48):

Հիսուս Քրիստոս հավիտենական և աստվածային անձնավորություն է, որ Ս. Կույս Մարիամի միջոցով մարդացավ, մարդկային բնություն հագավ (հմմտ. Հովհաննես 1.1, 14): Ս. Գրքում Հիսուս Աստված է անվանվում (հմմտ. Հովհաննես 1.1, 20.28): Արդ, եթե Մարիամը ծնունդ տվեց և սնեց աստվածային անձնավորությանը, ուրեմն արդարորեն արժանի է Աստվածամայր կոչվելու: Այս, անշուշտ, չի նշանակում, որ նա Հայր Աստծու մայրն է, և նրանք, ովքեր կասկածի տակ են դնում Հիսուսի Աստվածությունը, մերժում են նաև Մարիամի Աստվածամայր լինելը: Հետևաբար Աստվածամոր հանդեպ մեր ցույց տված առանձնահատուկ պատվի մեջ չկա և ոչ մի հեթանոսական սովորություն:

ՄԱՐԻԱՄԻՆ ԵՎ ՍՐԲԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՂՈԹՔՆԵՐ

Առարկություն 4. - Հայ եկեղեցում Մարիամին և սրբերին աղոթքներ են ուղղվում, իսկ դա արդյո՞ք Նրանց պաշտել չի նշանակում:

Հայ եկեղեցու հավատացյալները աղոթքով Մարիամ Աստվածածնի և մյուս սրբերի[7] բարեխոսությունն են խնդրում Աստծու մոտ: Մենք հավատում ենք, որ եկեղեցին իր մեջ ընդգրկում է թե՛ մեզ՝ ապրող հավատացյալներիս, և թե՛ Քրիստոսով ննջածներին (հմմտ. Փիլիպ. 1.23-ում հիշված «Քրիստոսի հետ լինել» գաղափարի հետ): Մենք կազմում ենք «Զինվորյալ եկեղեցին», իսկ ննջեցյալները՝ «Հաղթական եկեղեցին»: Հավատում ենք, որ Եկեղեցու միության վարդապետությունը ճշմարիտ կերպով հաստատում է մեր հավատը, և նրանք, ովքեր Քրիստոսով ննջել են, չեն դադարում հավիտենականության մեջ մեզ համար աղոթելուց: Մենք մեծարում ենք սրբերին, երբ նրանց աղոթքներն ենք խնդրում: Ցանկացած իրադրության մեջ այս արարքը չի կարելի ընդունել որպես Ս. Երրորդությանը մատուցված պաշտամունքի նմանություն:

ԿԱՐՈ՞Ղ ԵՆ ԱՐԴՅՈՔ ՍՐԲԵՐԸ ԼՍԵԼ ՄԵՐ ԱՂՈԹՔՆԵՐԸ

Առարկություն 5. - Ինչպե՞ս եք հաստատում, թե սրբերը ձեր աղոթքները լսում են:

*Եկեղեցու դարավոր պատմությունն ու հավատացյալների փորձառությունը հաստատում են, որ սրբերը լսում են մեր աղոթքները: Աստծուն հաճելի են սրբերի բարեխոսությունները, և Աստված շատ հրաշքներով և օրհնություններով պատասխանել է հավատացյալների աղոթքներին: Արդարի աղոթքը այնքա՜ն ազդեցիկ և ընդունելի է նրա մահից հետո, որքան որ նրա մահվանից առաջ: Աստված Ս. Հոգով փառավորում է իր սրբերին (հմմտ. Հովհաննես 17.22): Ռուս սրբակենցաղ վանական Սիլվանը այսպես է բացատրում այդ ճշմարտությունը. «Կար ժամանակ, երբ չէի կարողանում հասկանալ, թե երկնքի սուրբ բնակիչները ինչպես են կարողանում տեսնել մեր կենցաղը: Սակայն, հասկացա, որ Ս. Հոգու միջոցով են տեսնում և գիտեն մեր բովանդակ կյանքը: Երկնքի թագավորության[8] մեջ սրբերը վայելում են մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի փառքը և Ս. Հոգու միջոցով տեսնում են երկրի վրա ապրող մարդկանց չարչարանքները (*Archimandrite Sophron, Wisdom from mount Athos, 1974, St. Vladimir's Seminary Press, Crestwood, New York, p. 60*): Աստծու հետ ունեցած իրենց մտերիմ միության միջոցով նրանք տեսնում են մեզ, լսում են և ճանաչում: Երբ Հիսուս ասաց. «Աբրահամը՝ ձեր հայրը, ցանկացավ իմ աշխարհ գալու օրը տեսնել. տեսավ և ուրախացավ» (Հովհաննես 8. 56), դրանով իսկ ցույց տվեց, որ այս երկրից հեռացածները կարող են երկրավոր դեպքերին հաղորդակից դառնալ:*

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ՍՐԲԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՂՈԹՔՆԵՐԸ

Առարկություն 6.- Սակայն այդպիսի երևույթ աստվածաշնչական և եկեղեցական պատմության տվյալներով չի հաստատվում:

Աստվածաշունչը շատ հստակորեն ընդգծում է, որ որոշ մարդկանց բարեխոսությունը Աստծու կողմից շատ ազդեցիկ և ընդունելի է եղել (Հովհաննես 5.16-18, Հոբ 42.8): Եվ այս երևույթը հատուկ չէ միայն մեր երկրավոր կյանքին: Մակաբայեցիների երկրորդ գրքում, որը որոշ հարանվանությունների կողմից սուրբգրական կանոնից դուրս է հանվում, կարդում ենք, որ Երեմիա մարգարեն Իսրայելի ժողովրդի համար անդադար Աստծուն աղոթում էր (Բ Մակաբ. 15.14): Այդ վարդապետությունը ընդունել էր նաև նորաստեղծ եկեղեցին: Այդ ժամանակաշրջանում գերեզմանների տապանաքարերի վրա ննջեցյալներից աղոթք խնդրող արձանագրություններ են եղել, որի մասին վկայում են «Ս. Պոլիկարպոսի նահատակությունը»[9] և այլ աղբյուրներ: Ոչ ուղղափառ եկեղեցիների կողմից որպես հեղինակություն ընդունված և հարգված եկեղեցական հայրերից Ս. Օգոստինոսը[10], Ս. Աթանասը[11] և Ս. Հովհան Ոսկեբերանը[12] ընդունել են այս ընդհանրական և ուղղափառ վարդապետությունը:

ՀԻՍՈՒՍԸ՝ ՄԻԱԿ ՄԻՋՆՈՐԴ

Առարկություն 7.- Եթե մենք փրկվել ենք Քրիստոսի արյունով, էլ ի՞նչ կարիք կա սրբերին աղոթելու: Հիսուս է Աստծու և մարդկանց միակ միջնորդը:

Այո՛, Հիսուս է մեղավոր մարդկության միակ Փրկիչը, Աստծու և մարդկանց միջև միակ միջնորդը: Եվ եթե Հիսուս մեզ փրկելու համար Իր արյունը թափեց, մի՞թե մենք այլևս փոխադարձ աղոթքների կարիք չունենք: Ընդհակառակը, Աստվածաշունչն ու քրիստոնեական ավանդությունը վկայում են քրիստոնյաների կյանքում աղոթքի ունեցած կարևորության և զորության մասին (Հմմտ. Բ Կորնթ. 1.11): Մահվամբ մեզանից բաժանված սրբերը բարեխոսներ են և ոչ թե միջնորդներ, և Աստված միշտ լսում է նրանց աղոթքները:

ՍՐԲԱԴԱՍՈՒՄ ԿԱՄ ՍՐԲԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՆԱՑՈՒՄ

Առարկություն 8.- Աստվածաշունչը բոլոր քրիստոնյաներին սուրբ է կոչում, հետևաբար սխալ է միայն ոմանց սրբերի շարքին դասելը:

Նոր Կտակարանի թղթերում քրիստոնյաները հիշվում են որպես սրբեր: Ընդունելով աստվածաշնչական այս հաստատումը, Հայ եկեղեցին «սուրբ» տիտղոսը օգտագործում է հատուկ ձևով, և նրանով ակնարկում է ա՛յն հատուկ անձերին, որոնց կյանքում և գործերում

արտացոլվել են քրիստոնեական առաքինությունները: Սրբերի կանոնականացումով Եկեղեցին չի ասում, թե այն քրիստոնյաները, ովքեր սրբերի դասը չեն անցել, սրբեր չեն՝ վերևում նշված աստվածաշնչական ըմբռնումով, այլ ասում է, որ Եկեղեցին սրբադասելով վսեմացնում է այն քրիստոնյաներին, որոնք Ս. Հոգու ծավալած գործունեության և շնորհների շողերն ու Քրիստոսի ասած «առավել կյանք» ունեցող անհատներն են եղել: «Սուրբ» բառի նախնական և հիմնական գործածությամբ, համաձայն Նոր Կտակարանի, բոլոր քրիստոնյաներն էլ սրբեր են, սակայն բառի երկրորդական նշանակությամբ, եկեղեցու այդ ընկալումը բնորոշում է միայն առանձին անհատների: Եկեղեցին հրավիրում է մեզ նմանվել սրբադասված սրբերին:

ՄԻԱՅՆ ԱՍՏՎԱԾԱԾՈ՞ՒՆՉ

Առարկություն 9.- Քրիստոնեական ճշմարիտ հավատի հիմքը միայն Աստվածաշունչ մատյանն է:

Աստվածաշունչ մատյանը, որպես առանձին գիրք, երբեք հավատի հիմք չի հանդիսացել: Ուղղափառ և Ընդհանրական[13] եկեղեցին էր, որ ճշտեց Աստվածաշնչի կանոնը: Առաքյալների մահվանից հետո, հրապարակի վրա կային շատ գրվածքներ, որոնց հեղինակներ նրանց էին համարում: Եկեղեցին, համեմատելով այդ գործերը առաքյալների կտակած բանավոր ավանդության հետ, ճշտեց դրանց հարազատությունը բանավոր ավանդությանը: Եթե Եկեղեցին չձեռնարկեր այս գործը, մենք այսօր զրկված կլինեինք Աստվածաշունչ մատյանից: Հերձվածները և հերետիկոսական շարժումները առաջանում են այն ժամանակ, երբ Աստվածաշունչը անջատվում է Եկեղեցուց և կամ կամայականորեն է մեկնաբանվում: Այդ սկզբունքը խորթ է Ընդհանրական եկեղեցու ավանդությանը (հմմտ. Բ Պետրոս 3.16): Քրիստոս հայտնեց, թե Ս. Հոգին, որը ներշնչել է Աստվածաշնչի գրությանը, պիտի առաջնորդի նաև Եկեղեցուն և նրան զերծ պահի սայթաքումներից (հմմտ. Հովհաննես 16.13): Աստվածաշունչը և ավանդությունը պատկանում են Եկեղեցուն:

ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԶԱՆԱԶԱՆ ՀԱՐԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առարկություն 10.- Քրիստոսի եկեղեցին աներևույթ է: Չեմ հավատում ո՛չ Հայ եկեղեցուն և ո՛չ էլ ուրիշ հարանվանություններին[14]:

Հայ եկեղեցին հարանվանություն չէ, այլ ճիշտ և ճիշտ նման է առաքյալների հաստատած եկեղեցուն, որը հաղթահարեց գնոստիկ[15], արիոսական[16] ու բազում այլ հերետիկոսությունները, հաստատեց Աստվածաշնչի կանոնը և բանաձևեց Ս. Երրորդության ու Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների մասին վարդապետությունները: Հայ եկեղեցու պատմությունը սկսվում է Հիսուսից և հասնում է մինչև ներկա ժամանակները՝ առանց ընդմիջման: Անկարելի է պնդել, թե եկեղեցին անրևույթ է: Արդյո՞ք առաք-

յալների հիմնած տեղական-ազգային եկեղեցիները աներևո՞ւյթ էին: Չէ՞ որ Աստվածաշնչի կազմությունն ու կանոնականացումը պատմականորեն կարելի է հաստատել: Չէ՞ որ պատմականորեն կարելի է արձանագրել, որ հերձվածները պատմական եկեղեցու կողմից պարտության մատնվեցին: Ուրեմն, բանականությունը հաստատում է, որ եկեղեցին երևելի է և ունի իր պատմական ենթահողը, որը համապատասխանում է ներկա Հայ եկեղեցուն և այլ ուղղափառ եկեղեցիներին:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Առարկություն 11.- Բայց Հայ եկեղեցին շեշտը դնում է ավելի ավանդության, քան Աստվածաշնչի վրա:

Ո՛չ: Հայ եկեղեցին շեշտը չի դնում ավանդության վրա ավելի, քան՝ Աստվածաշնչի: Նա ընդունում է Աստվածաշնչի աստվածային ներշնչումն ու անսխալականությունը: Աստվածաշունչը հավատի և քրիստոնեական կյանքի տեսանկյունից անզուգական հեղինակություն է: Սակայն Հայ եկեղեցին պնդում է, որ Աստվածաշունչը պետք է մեկնաբանվի Ընդհանրական եկեղեցու ընդհանուր ավանդության շրջանակներում: Այս «ընդհանուր ավանդությունները» հիմնված են առաքյալների բանավոր ուսուցումների վրա և փոխանցվել են եկեղեցուն (հմմտ. Բ Թեսաղ. 2.15): Սա ապացույցն է այն ճշմարտության, որ Ս. Հոգին ապրում է եկեղեցու մեջ (հմմտ. Հովհաննես 14.26): Այն պահպանվել է Տիեզերական ժողովների[17], սրբերի և եկեղեցու հայրերի ուսուցումների մեջ: Նրանք, ովքեր իրենց կյանքը Ս. Հոգու շնորհներին համաչափ են ապրում, Աստվածաշնչի ամենավավերական մեկնաբաններն են և նույն նրանք են, որ վկայում են Աստվածաշնչի և Ավանդության ներքին կապի մասին:

ԵԿԵՂԵՑՈՒՄ ԴՐՎԱԾ ՆԿԱՐՆԵՐԸ

Առարկություն 12.- Հակառակ նրան, որ Աստվածաշունչը արգելում է, Հայ եկեղեցում գործածվում են նկարներ:

Համաձայն Հին Կտակարանի օրենքի, նկարներ նկարելը արգելված էր, սակայն, այս արգելքը բացարձակ չէր: Աստված պատվիրեց, որ երկու քերովբեների[18] նկարներ տեղադրվեն Ուխտի տապանակի[19] վրա (հմմտ. Ելք, 25.18): Պետք է ճիշտ ըմբռնել. Աստվածաշունչը դատապարտում է սուտ աստծու նկարը նկարելը և այն երկրպագելով՝ նրան պաշտամունք մատուցելը: Աստված կռապաշտությունն է արգելում և ոչ թե՝ նկարներ ստեղծելը:

Թվում է, թե Աստվածաշունչը իրոք արգելում է որևէ նկար ստեղծելը, սակայն Ելք 20.4-ում կարդում ենք, թե՝ «Վերևում՝ երկնքում, ներքևում՝ երկրի վրա, և երկրի խորքի ջրերի մեջ եղած որևէ բանի նմանությամբ քեզ կուռքեր չպիտի կերտես»: Սակայն հաջորդ համարում արդեն պարզ է դառնում, որ խոսքը

գնում է կռապաշտության մասին (հմմտ. Ելք 20.5), քանի որ այդ դեպքում Աստված չէր պատվիրի, որ նկարներ ստեղծվեն:

Բայց այստեղ ավելի խորը սկզբունք կա: Մենք այլևս ենթակա չենք «Օրենքին[20], այլ՝ շնորհի տակ ենք» (Հռոմ. 6.14): «Դուք, որ օրենքով եք արդարանում, Քրիստոսից կտրված եք, շնորհից ընկած» (Գաղատ. 5.4): Հիսուս Քրիստոսի մարդեղացումը հեղաշրջեց մարդ արարածի հետ Աստծու ունեցած հարաբերության սկզբունքները: Անշուշտ, Հին Կտակարանի օրենքների տեսանկյունից նայելով, այդ դեռ ոչինչ չի նշանակում: 6-7-րդ դարերի մեր մատենագիրներից Վրթանես Քերթողը իր «Պատկերամարտերի մասին» երկում պայքարում է պատկերները անարգողների դեմ և պարզաբանում է եկեղեցու դիրքորոշումն ու հարգանքը պատկերների հանդեպ: Պատկերահարգության՝ պատկերները հարգելու մասին գրված առաջին գործը Վրթանես Քերթողին է պատկանում: Իրոք, եթե Ելք 20.4 համարը իր տեղից հանենք և տառացիորեն մեկնաբանենք, ապա անկարելի կլինի արդարեցնել որևէ նկար նկարելը, նույնիսկ նկարչական սարքեր օգտագործելով: Սա Աստծու կողմից չի արգելվել: Ավելին, ի վերջո, գիրն էլ նկարի մի տեսակ է ... : Միայն կռապաշտությունը, սուտ աստվածներին պաշտամունք մատուցելն է արգելված, իսկ Քրիստոսի և սրբերի նկարները դիտել որպես «կուռքեր», համազոր է հայհոյության:

ՆԿԱՐՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԱՂՈԹՔ

Առարկություն 13. - Մի անգամ տեսա, որ մի հայ քրիստոնյա աղոթում էր նկարին: Այդպիսի սովորությունը Աստվածաշնչի ուսուցումներին հակառակ է:

Հայ քրիստոնյաները նկարներին չեն աղոթում: Հավանաբար տեսել եք, թե ինչպես են աղոթում նկարների դիմաց կանգնած, բայց ո՛չ նկարներին: Այսպիսով աղոթքն ուղղված է Քրիստոսին, և կամ էլ նկարում պատկերված սրբի բարեխոսությունն է խնդրվում: Իսկ նկարին աղոթելը նախապաշարումի համազոր մեղք է, որը դատապարտում է Հայ եկեղեցին:

ՆԿԱՐՆԵՐԻ ՄԵԾԱՐՈՒՄ

Առարկություն 14.- Հայ քրիստոնյաները ծնրադրում են նկարների դիմաց և համբուրում դրանք: Սա անընդունելի է Աստծու կողմից և բացահայտ կռապաշտություն է:

Երբ որևէ մեկը համբուրում է մոր նկարը, արդյո՞ք թղթի այդ կտորն է պաշտում, թե մոր հանդեպ ունեցած սերն է արտահայտում: Կռապաշտ կդառնանք, եթե որևէ առարկա պաշտենք որպես Աստված: Հին ցեղերը և ժողովուրդները հենց այս պատճառով են կռապաշտ կոչվել:

Քրիստոնյաները երկյուղածություն են դրսևորում նկարի հանդեպ, քանի որ նրանով է խորհրդանշվում տվյալ անձը: Այդ կերպ Քրիստոսի կամ որևէ այլ սրբի

հանդեպ է արտահայտվում սերն ու բարեպաշտությունը և ոչ թե փայտի, թղթի կամ ներկի: Հովհան Դամասկացին գրում է. «Ես նյութը չեմ պաշտում, այլ պաշտում եմ նրան, որ իմ փրկության համար նյութ դարձավ»: Ուրեմն, Հայ եկեղեցին համարում է, որ որևէ նկարի հանդեպ արտահայտված պատիվը այդտեղ պատկերված անձի նկատմամբ տածած հարգանքն է:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

Առարկություն 15.- Աստվածաշնչի ասածների հիման վրա չեմ կարող ընդունել եկեղեցու այս կամ այն որոշումը:

Եթե չես ընդունում եկեղեցու հեղինակությունն ու անսխալականությունը, ինչպե՞ս կարող ես ընդունել Աստվածաշնչի հեղինակությունն ու անսխալականությունը: Ուղղափառ եկեղեցին էր, որ ճշտեց Աստվածաշնչի բաղկացուցիչ գրքերը՝ Կանոնը: Երբ պատրաստվում էր Նոր Կտակարանը, շատ ավետարաններ և գրվածքներ կային, որոնց վերագրվում էր առաքելական հեղինակություն: Եկեղեցին մերժեց անհարազատները և ընդունեց նրանք, որոնք վավերականորեն առաքելական էին և աստվածային ներշնչումով էին գրված: Եթե ընդունենք, որ եկեղեցին պատկերների մեծարումը՝ հարգանքը, որդեգրելով սխալ գործեց, ապա Աստվածաշնչի Կանոնի կազմության մեջ էլ սխալներ կլիներին: Հետևաբար, եթե այդ տրամաբանությամբ առաջնորդվեինք, այսօր առանց Աստվածաշնչի ու առանց եկեղեցու կմնայինք:

Քրիստոս խոստացավ եկեղեցուն առաջնորդել ամենայն ճշմարտությամբ, որին անգամ մահը իր ամբողջ զորությամբ չի կարողանա հաղթահարել (հմմտ. Հովհաննես 16.13, Մատթեոս 16.18):

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՄԵԾԱՐՈՒՄ

Առարկություն 16.- Ինչո՞ւ են հայերը միշտ խաչը համբուրում:

Հայ քրիստոնյաները մեծարում են Ս. Խաչը, որովհետև նրանով մեր փրկությունը իրագործվեց: Պողոս առաքյալը գրում է. «Սակայն քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղատ. 6.14): Քրիստոսով խաչը դարձավ զոհողության և փրկագործության խորհրդանիշը: Հայ եկեղեցու շարականները, նվիրված Ս. Խաչին, այնքա՜ն գեղեցիկ են բանաձևում այս ճշմարտությունը, որ հայ հավատացյալները իրենց սերն ու երկյուղածությունը ֆիզիկապես արտահայտելով՝ համբուրում են խաչը:

ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ «ՀԱ՞ՅՐ» ԿՈՉԵԼ

Առարկություն 17.- Հայերը իրենց քահանաներին «հայր» են կոչում, ասելով՝ «Տեր հայր», «Հայր սուրբ», «Սրբազան հայր», «Վեհափառ հայր», մինչդեռ Հիսուս արգելում է այդ (Մատթեոս 23.9):

Քրիստոս, սովորեցնելով քրիստոնեական խոնարհություն, հիշեցրեց մեզ, որ մեր միակ և ճշմարիտ Հայրը երկնքում է: Այսօր, անգամ ամենածայրահեղ բողոքականները չեն վարանում իրենց երկրավոր հայրերին «հայր» կոչել: Հիսուս, քարոզության ժամանակ, բնականորեն, չէր ակնարկում հայ և այլ քրիստոնյաների ներկա սովորությունը, որովհետև այդ օրերին «հայրը» եկեղեցական տիտղոս չէր:

Պողոս առաքյալը, որ Հիսուսի կողմից հրավիրվեց ավետարան քարոզելու, առանց տարակուսելու ինքն իրեն վերագրեց «հայր» տիտղոսը: Նա գրում է. «Թեպետ և բյուր դաստիարակներ ունեք Քրիստոսով, բայց ոչ՝ բազում հայրեր, որովհետև Քրիստոս Հիսուսի ավետարանով ե՛ս ծնեցի ձեզ» (Ա Կորնթ. 4.15):

Այդ ընկալումով էլ Հայ եկեղեցու քահանաներին հավատացյալները «հոգևոր հայր» են կոչում: Պողոս առաքյալը «հայր» կոչեց նաև Եփեսոսի ծնողներին (Եփես. 6.4): Հետևաբար, Աստվածաշունչն ու քրիստոնեական ավանդությունը վկայում են, որ Հիսուսի խոսքերը բառացիորեն և նեղմիտ կերպով չպետք է հասկանալ: Հակառակ դեպքում պիտի ընդունենք, որ «պատվելի», «հովիվ» և այլ տիտղոսների գործածությունն էլ արտոնված չէ Հիսուսի կողմից: Բայց երբ Հիսուսի խոսքերը դիտում ենք իրենց տեղում՝ բնագրի մեջ, ապա տեսնում ենք, որ նա պատվիրում է ժողովրդին հեռու մնալ ամբարտավանությունից և ձգտել համեստության (հմմտ. Մատթեոս 23. 5-7, 11-12):

ԲՈԼՈՐ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐՆ ԷԼ ՔԱՀԱՆԱ ԵՆ

Առարկություն 18.- Աստվածաշունչն ասում է, որ բոլոր քրիստոնյաները քահանա են: Ինչո՞ւ է Հայ եկեղեցին միայն իր հովիվներին «քահանա» կոչում:

Եթե բոլոր քրիստոնյաները քահանա են, ապա բոլոր քրիստոնյա հովիվներն էլ են քահանաներ: Հայ քահանայի պաշտոնական տիտղոսը «երեցն» է, չնայած «քահանա», «տեր հայր», «տերտեր» բառերը ավելի շատ են տարածված: Հայ եկեղեցին ընդգծում է քահանայության «թագավորական» լինելու հատկանիշը, հիմնվելով Պետրոս առաքյալի հետևյալ խոսքերի վրա. «Բայց դուք ընտիր ցեղ եք, թագավորություն, քահանայություն, սուրբ ազգ, Աստծու սեփական ժողովուրդ, որպեսզի ձեր առաքինությունները նվիրեք նրան, ով խավարից ձեզ կանչեց սքանչելի լույսին» (Ա Պետրոս 2.9): Սակայն սա չի նշանակում, որ բոլոր հավատացյալները ձեռնադրված քահանաներ են: Աստվածաշունչը շատ հստակ բացատրում է, որ Հիսուս իր առաքյալներին հատուկ իշխանություն տվեց, որոնք չտրվեցին Իր մյուս հետևորդներին (հմմտ. Մատթեոս 16.19, 18.18, Հովհաննես 20.22): Եկեղեցին այս առաքելական իշխանությունը ձեռնադրությամբ փոխանցում

է Հայ եկեղեցու քահանայական դասին (Հմմտ. Գործք 14.23, Ա Տիմոթ. 4.13):

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ ԶՈՀԱԳՈՐԾՈՒԹՅՈ՞ՒՆ

Առարկություն 19.- Հիսուս միակ քահանայապետն է, որ Ինքն իրեն մեկ անգամ մեղքերի քավության համար զոհաբերեց: Հայ եկեղեցին ինչպե՞ս է կարողանում հավատալ, որ Ս. Պատարագը քահանայի կողմից մատուցված զոհն[21] է:

Հայ եկեղեցին սովորեցնում է այն վարդապետությունը, թե Քրիստոսի ինքնազոհաբերությունը մեղքերի թողության միակ և կատարյալ գրավականն է: Սակայն, եկեղեցու սկզբնական շրջանից սկսած, Ս. Պատարագը դիտվել է որպես զոհաբերություն: «Տասներկու առաքյալների վարդապետության» (DIDACHE[22]) մեջ Ս. Պատարագը Մաղաքիա մարգարեի հիշած զոհի հետ է առնչվում (Հմմտ. Մաղաքիա 1.11): Նույնն են սովորեցնում նաև եկեղեցու հայրերը: Պողոս առաքյալը Կորնթացիներին ուղղված իր Առաջին թղթում (գլուխ 10) ներկայացնում է Ս. Պատարագի զոհաբերական նկարագիրը: Ս. Պատարագը Աստծուն ընծայած մեր փառաբանության և գոհաբանության զոհն է (Հմմտ. Եբր. 13.15) Դրանով՝ Ս. Պատարագով, նյութեղեն ընծաները, ինչպես նաև մեր անձերը, (Հմմտ. Հռոմ. 12.1) նվիրաբերում ենք Աստծուն (Հմմտ. Փիլիպ. 4.18): Ավելին, Ս. Պատարագը զոհագործություն է, որովհետև դրանով մեր Փրկչի՝ Գողգոթայի վրա կատարած զոհաբերությունը խորհրդանշորեն Ս. Սեղանի վրա ներկայացնելն է: Դրանով Քրիստոսի զոհագործությունը չէ, որ կրկնում ենք, այլ մենք Քրիստոսի՝ Գողգոթայում կատարված զոհաբերությունը վերընծայում ենք Աստծուն՝ մեր աղոթքներով և խնդրանքներով: Դրանով Եկեղեցին, որպես Քրիստոսի մարմինը, մասնակցում է Քրիստոսի հավիտենական Քահանայապետությանը և Ինքնաընծայմանը (Հմմտ. Եբր. 7.24-25, 8.1-3): Իրոք Ս. Պատարագը զոհաբերություն է, որի միջոցով եկեղեցին՝ հավատացյալների բազմությունը, իր պաշտամունքով և բարեխոսական մաղթանքներով միանում է Քրիստոսի միակ զոհագործության հետ, որը Հիսուս Քրիստոսի բաշխվող մարմինն է ու արյունը՝ մեր մեղքերի քավության համար:

ՀԱՅ ԾԵՍԸ

Առարկություն 20.- Ինչո՞ւ է հայ ծեսը լեցուն շքեղ արարողություններով: Ըստ Նոր Կտակարանի պաշտամունքը պարզ տեսքով պետք է լինի:

Աստված դեմ չէ արարողություններին և ծիսակատարություններին: Հին Ուխտի համաձայն, Նա պատվիրեց, որ բազմապիսի ծեսեր կատարվեն: Հայտնության գիրքը ցույց է տալիս, որ պաշտամունքի ֆիզիկական արարողությունները արտացոլվում են երկնքի արքայության մեջ (Հմմտ. Հայտն. 5.6-14, 8.1-4): Ուղղափառ եկեղեցին հավատում է, որ եկեղեցին Աստծու Թագավորությունն է երկրի վրա: Հետևաբար, եկեղե-

ցու պաշտամունքը պետք է այդ թագավորության փառքը արտահայտի: Եկեղեցական բազմաթիվ աղբյուրներ հաստատում են, որ Հայ եկեղեցու պատարագը պահել է նախնի եկեղեցու պաշտամունքի հիմնական տարրերը և դարերի ընթացքում այն ավելի ճոխացրել: Դժբախտաբար, այդ դրական հանգամանքը չենք կարող վերագրել բողոքական պաշտամունքին: Քրիստոնեության առաջին դարերում հավատացյալները հավաքվում էին շաբաթվա առաջին՝ կիրակի օրը, Աստծու խոսքը լսելու և Տիրոջ Ընթրիքին մասնակցելու համար: Նրանք հավատում էին, որ սրբագործված հացն ու գինին Քրիստոսի մարմինն ու արյունն են դառնում: Ավետարանականները[23], մերժելով այս ճշմարտությունը, հեռանում են նաև Նորկտակարանյան եկեղեցու ավանդությունից:

ՇԵ՞Ս ԹԵ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆ

Առարկություն 21.- Հայ եկեղեցին շեշտը ավելի դնում է ծեսի վրա, քան՝ Հիսուսով հոգիների փրկության:

Հայ եկեղեցու ծեսը քրիստոնյա համայնքի պաշտամունքն է և վերաբերում է միայն նրանց, ովքեր արդեն ընդունել են Քրիստոսին և հավատում են Նրան: Քրիստոնեական եկեղեցու սկզբնական շրջանում ոչ-հավատացյալներին չէին թույլատրում նույնիսկ պաշտամունքին ներկա գտնվել: Բողոքականության «ավետարանչական» արդի պաշտամունքի

ձևը մի շեղում է քրիստոնեական հարազատ պաշտամունքի ձևից:

Այս չի նշանակում, որ առաքելական ու ավետարանչական աշխատանքը Բողոքական եկեղեցու մենաշնորհն է:

Հայ եկեղեցին չի անտեսում Ընդհանրական եկեղեցու կյանքի մաս կազմող այդ կողմը՝ ավետարանչությունը: Եթե, եղել են ժամանակներ, երբ Հայ եկեղեցին չի լծվել ավետարանչության և առաքելության գործին, ապա դրա պատճառը պետք է փնտրել պատմականորեն ստեղծված անհանդուրժողական պայմանների մեջ, հատկապես իսլամական, թուրքական և համայնավարական տիրապետությունների ժամանակաշրջաններում: Վավերական ու ճշմարիտ հավատը հորդորում է, որ բոլոր քրիստոնյաները Քրիստոսի առաքյալներ ու վկաներ լինեն:

ՀԱՅԵՐԸ ՎԵՐՍՏԻՆ ԾՆՎԵ՞Լ ԵՆ

Առարկություն 22.- Հիսուս ասաց. «Պետք է վերստին ծնվեք»: Բայց հայ քրիստոնյաները վերստին ծնված հավատացյալներ չեն:

Նոր Կտակարանը սովորեցնում է, որ Հիսուս Քրիստոսին հավատացողները մկրտությամբ՝ ջրով ու Ս. Հոգով արժանի են դառնում «նոր ծնունդի»: «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը վերստին չծնվի չի կարող Աստծու արքայությունը

տեսնել» (Հովհաննես 3.5): Նույն վարդապետությունն է սովորեցնում նաև Պողոս առաքյալը, երբ մկրտության մասին գրում է. «Փրկեց մեզ վերստին ծննդյան լվացանի միջոցով և նորոգությամբ Սուրբ Հոգու» (Տիտոս 3.5): Այսինքն, այն անձը, որ նախապես հոգեպես մեռած էր, հավիտենական կյանքի պարգևը ստացավ: Այս հոգևոր ծնունդը անհրաժեշտ է փրկության համար: Այս է Հայ եկեղեցու վարդապետությունը և, հետևաբար, հայ քրիստոնյաները իրավամբ «վերստին ծնվածներ են:

Այսօր, «վերստին ծնված քրիստոնյաներ» արտահայտությամբ բնորոշվում են այն անհատները, որոնք անցնում են զգայացունց՝ զգայանքները գրգռող հոգեվիճակների միջով: Սա սուրբգրային վարդապետություն չէ: Նոր ծնունդը հոգևոր դարձ է և անպայմանորեն զգացական հոգեվիճակների արտահայտվելով պայմանավորված չէ:

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԸ «ՓՐԿՎԱ՞Ծ» ԵՆ

Առարկություն 23.- Ինչո՞ւ է հայ եկեղեցին ուրանում, որ հավատացյալները փրկված են:

Հայ եկեղեցին չի ուրանում այն փաստը, որ հավատացյալը «փրկված» է, այլ մերժում է այն վարդապետությունը, թե անհատը «ապահովագրել» է իր երկինք գնալը: Նոր Կտակարանի համաձայն, երբ անհատը մկրտվում է Քրիստոսով, նա մեղքի և մահվան տիրապետությունից ազատվում է և խավարի զորությունից անցնում է Քրիստոսի թագավորություն (հմմտ. Կողոս. 1.13): Բայց, չնայած դրան, նա կարող է մեղքի պատճառով սայթաքել և հեռանալ Քրիստոսից (հմմտ. Եբր. 6.4-6): Քրիստոնյաները չեն կարող ասել, թե փրկված են, մինչև որ չժառանգեն երկնքի թագավորությունը (հմմտ. Ա Պետրոս 1.5):

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ «ՓՐԿՎԱԾ ԵՄ»-Ի ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Առարկություն 24.- Փառք եմ տալիս Աստծուն ապահովագրված լինելու օրինյալ վարդապետության համար: Վստահ եմ, որ փրկված եմ և երկինք պիտի գնամ:

Իհարկե, կարելի է այդպիսի վարդապետության համար շնորհակալություն հայտնել Աստծուն, սակայն այդպիսի վարդապետությունը չի դադարի հակաաստվածաշնչական լինելուց: Աստվածաշունչը շատ հստակորեն սովորեցնում է, որ հավատացյալը միշտ ենթակա է մեղքի ճիրանների մեջ ընկնելու փորձությանը դեմ առ դեմ գտնվելու և իր փրկության շնորհը կորցնելու: Պողոս առաքյալը սովորեցնում է մեզ հետևյալ խոսքերով. «Այսպես ուրեմն, ով կարծում է, թե կանգնած է հաստատ, թող զգույշ լինի, գուցե թե ընկնի» (Ա Կորնթ. 10.12): Նա բոլոր քրիստոնյաներին ազդարարում է նաև, նկատի ունենալ Մովսեսի հետ Կարմիր ծովը անցնող իսրայելացիների օրինակը, երբ նրանք հետո՝ ավելի ուշ, սայթաքեցին և պատժվեցին

(Ելք 13.14): Եբրայեցիներին ուղղված թղթում նույն այդ օրինակն է բերվում և քրիստոնյաները սաստվում են՝ զգաստության հետևյալ պատգամով. «Եղբայրնե՛ր, տեսե՛ք, ձեզանից որևէ մեկի մեջ թող երբեք չլինի չար ու անհավատ սիրտ և ապստամբի կենդանի Աստծու դեմ» (Եբր. 3.12): Մեր հավիտենական փրկությունը կախված է Քրիստոսի հանդեպ մեր դիրքի ունեցած հարատևությունից, քանի որ «ահա մասնակից եղանք Քրիստոսին, միայն թե հաստատ պահենք այն վստահությունը, որ ունեցել ենք սկզբից» (Եբր. 3.14):

. Պողոս առաքյալը չի՛ գրում, թե քրիստոնյան «հավիտենական ապահովագրություն» ունի, այլ ասում է, որ հարության նպատակակետին է ձգտում (հմմտ. Փիլիպ. 3.9–14): Իսկ Կորնթացիներին գրում է. «Այլ ճնշելով ամրացնում եմ իմ մարմինը և հնազանդեցնում այն, որպեսզի գուցե ես ինքս խոտելի չլինեմ այն բանում, որ քարոզեցի ուրիշներին» (Ա Կորնթ. 9.27): Քրիստոնեական փրկությունը հավատի բոպեական շրջադարձ չէ, այլ այն իրականացվում է ամենօրյա ապաշխարողական կյանքով և Քրիստոսին տևապես վստահելով, այլապես մենք էլ կենթարկվենք Պետրոս առաքյալի դատապարտությանը. «Որովհետև, եթե մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսին ճանաչելու միջոցով աշխարհի պղծություններից փախչելուց հետո դարձյալ նույն բաներով բռնվեն մնան, նրանց վախճանը կլինի ավելի վատ, քան առաջին վիճակը, քանի որ ավելի լավ է նրանց համար, եթե բնավ ճանաչած չլիներին արդարության ճանապարհը, քան այն, որ ճանաչեցին և հետ կանգնեցին այն սուրբ պատվիրանից, որ

ավանդվեց նրանց» (Բ Պետրոս 2.20–21): Ուրեմն, շատ պարզ է, որ կարող ենք ճանաչել և ընդունել Քրիստոսին, իսկ հետո էլ՝ սայթաքել: Սրանից խուսափելու մեկ միջոց կա. անընդհատ աճող և ամենօրյա վստահություն ունենալ Քրիստոսի հանդեպ և պայքարել մեղքի դեմ: Լսե՛ք Հիսուսի խոսքը. «Ոչ ամեն մարդ, որ ինձ «Տե՛ր, Տե՛ր» է ասում, երկնքի արքայություն կմտնի, այլ նա՛, ով կատարում է կամքը իմ Հոր, որ երկնքում է» (Մատթեոս 7.21): Ուրեմն, կրկնենք Պետրոս առաքյալի հետ. «Ուստի, եղբայրնե՛ր, առավել ջանացե՛ք, որպեսզի բարի գործերով ձեր կոչումը և ընտրությունը հաստատ պահեք» (Բ Պետրոս 1.10):

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ՄԻԱՅՆ ՀԱՎԱՏՈՎ

Առարկություն 25.- Աստվածաշունչը սովորեցնում է, որ փրկությունը միայն հավատով է իրագործվում և ոչ թե գործերով (Եփես. 2.8–9):

Մենք փրկության արժանի ենք դառնում մեր հավատը պահելով: Նոր Կտակարանը շատ պարզ կերպով ընդգծում է, որ փրկություն ապահովող հավատը բարի գործերով է զարդարվում (Եփես. 2.10, Հակոբ. 2.14–26, Ա Հովհ. 2.4):

ՔՐԻՍՏՈՍԻՆ ԸՆԴՈՒՆԵԼ ՈՐՊԵՍ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԵՐ ՈՒ ՓՐԿԻՉ

Առարկություն 26.- Ինչո՞ւ Հայ եկեղեցին չի սովորեցնում ժողովրդին, որ Հիսուսին պետք է ընդունել որպես անձնական Տեր ու Փրկիչ:

Հայ եկեղեցին հատկապես այդ բառերը չի գործածում, սակայն շեշտը դնում է Քրիստոսի հանդեպ ունեցած հավատացյալի անձնական հավատի վրա: Հայ եկեղեցու Մկրտության կանոնում քահանան աղոթում է հետևյալ խոսքերով. «Ով Տեր, դու քո այս ծառայիդ կանչեցիր, որ մկրտությամբ սրբվի և լուսավորվի, աղաչում ենք, նրան արժանի արա քո մեծ շնորհիդ: Թոթափի՛ր նրա հին մեղքերը և նորոգիր նրան՝ նոր կյանք պարգևելով, և Սուրբ Հոգուդ զորությամբ լցրու նրան, որպեսզի քո Քրիստոսի փառքով նորոգվի»: Այնուհետև նա հարցնում է կնքահորը. «Երախան[24] ի՞նչ է ուզում»: Կնքահայրը պատասխանում է. «Հավատ, հույս, սեր և մկրտություն: Ուզում է մկրտվել և արդարանալ, մեղքերից սրբվել և դևերից ազատվել և ծառայել Աստծուն»: Անշուշտ, այս բոլոր շնորհները մկրտվողը ստանում է և դրանք իր քրիստոնեական կյանքում իրականացնելու կոչումն ունի: Նաև Ս. Պատարագի և ժամերգության[25] ժամանակ սարկավագի արտասանած քարոզներում ասվում է. «Ո՛վ Տեր մեր և Աստված մեր, մեր անձերը և մեզ քեզ ենք հանձնում»: Հետևաբար, Հայ եկեղեցին սովորեցնում է, որ հավատը մեր փրկության հիմնաքարն է:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԵՎ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Առարկություն 27.- Բայց Մկրտության և Հաղորդության խորհուրդներով մարդը չի փրկվի:

Քրիստոսի փրկագործական զորությունը փոխանցվում է խորհուրդների միջոցով, եթե դրանք ըմբռնենք եկեղեցու ճշմարիտ վարդապետության համաձայն: Խորհուրդների մեքենայական կատարումով փրկությունը չի փոխանցվում: Ավելին, Պողոս առաքյալը սաստում է, որ անարժանությամբ չմասնակցենք Ս. Հաղորդությանը, որպեսզի փրկության տեղը դատապարտություն չընդունենք (հմմտ. Ա Կորնթ. 11.29): Համենայն դեպս խորհուրդներով Աստծու շնորհը փոխանցվում է բոլոր նրանց, ովքեր արժանավորապես են ընդունում դրանք:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Առարկություն 28.- Ինչո՞ւ է Հայ եկեղեցին մկրտում երեխաներին: Երեխաները չեն կարող հավատալ Քրիստոսին:

Ոչ միայն Հայ եկեղեցին, այլ նաև քրիստոնյա եկեղեցիների մեծամասնությունը մկրտում է երեխաներին: Օրինակ, կաթոլիկները[26], անգլիկանները[27], լյութերականները[28], մեթոդիստները[29], երիցականները[30] և ուրիշներ: Մկրտչականները[31] և այլ ավետարանական հարանվանություններ դեմ են երեխաների

մկրտությանը: Հայ եկեղեցու զավակները մկրտվելով հռչակում են թե՛ իրենց քրիստոնեական հավատը, և թե՛ այդ հավատով աճելու իրենց նախանձախնդրությունը: Այդ պատճառով Հայ եկեղեցին կարևորում է կնքահոր դերը՝ որպես մկրտվող հավատացյալին քրիստոնեական վարդապետությամբ դաստիարակողի: Եթե երեխան իրոք քրիստոնյա ընտանիքում մեծանա, ապա անկասկած փոքր տարիքից սկսած կհավատա Հիսուսին: Ո՞վ կարող է հակաճառել, թե երկու տարեկան երեխայի հավատը չի կարող փրկել նրան: Քրիստոս մեծահասակներին, որպես օրինակ, մատնանշեց երեխաների հավատը (հմմտ. Մարկոս 10.15): Անշուշտ, մկրտված երեխան մեծանալով կարող է զրկվել մկրտության շնորհից, սակայն, այդ նույնն էլ կարող է պատահել մկրտված մեծահասակին: Մկրտվող երեխայի ծնողները, կնքահայրն ու կնքամայրը մկրտության ժամանակ խոստանում են, որ հոգ կտանեն երեխայի հոգևոր դաստիարակության ու զարգացման համար, կառաջնորդեն նրան Աստծուն ծառայելու ճանապարհով՝ սովորեցնելով քրիստոնեական պատվիրանները:

ՔԱՀԱՆԱՅԻՆ ԽՈՍՏՈՎԱՆԵԼԸ

Առարկություն 29.- Ինչո՞ւ են Հայ եկեղեցու զավակները խոստովանում քահանային: Միայն Աստված կարող է մեղքերին թողություն տալ:

Հայ եկեղեցին իրոք սովորեցնում է, որ միայն Աստված կարող է մեղքերին թողություն շնորհել, որովհետև մենք Քրիստոսով ենք փրկվում: Սակայն, ուշադրություն դարձնենք նաև այն փաստին, որ Իր տնօրինական կյանքի ընթացքում Հիսուս ներեց մարդկանց մեղքերը և իր առաքյալներին պատվիրեց. «Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի. եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Հովհաննես 20.23): Հենց այս նույն իշխանությունն էլ փոխանցվել է եկեղեցուն:

Նախնի եկեղեցում, երբ մեկը մեղք էր գործում, պարտավոր էր իր մեղքերը բոլոր հավատացյալների առաջ խոստովանել: Ավելի ուշ շրջանում, որդեգրվեց քահանայի առաջ կատարվող անհատական խոստովանության սովորությունը: Երբ մեկը մեղք է գործում, ապա նա կարիք ունի մեղքերից պաշտոնական արձակում ստանալու, որովհետև մեղքը ոչ միայն Աստծու և մեր միջև եղած կապն է խզում, այլ նաև խախտում է հավատացյալների միջև հաստատված հարաբերությունը ևս: Հետևաբար, քահանան, որպես առաքյալների շառավղի հաջորդը, մեղքերի թողություն է տալիս մեղավորին՝ հավատացյալների ներկայությամբ: Հայ եկեղեցին սովորեցնում է, որ ապաշխարությունը քրիստոնյայի ամենօրյա կենցաղավարության մի մասն է կազմում: Երբ քրիստոնյաները մեղանչում են, ապա պետք է անպայման խոստովանեն իրենց մեղքերը Աստծուն: Կան մեղքեր, որոնք մեղավորին անդամ զրկում են եկեղեցու անդամակցությունից (հմմտ. Ա Կորնթ. 5.1-5), մինչև որ նա խոստովանությամբ և

ապաշխարությամբ արժանի դառնա քահանայի թողությանը և վերադառնա եկեղեցու գիրկը՝ հավատացյալների ժողովին:

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՅՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱ՞Ն Է

Առարկություն 30.- Տիրոջ ընթրիքի[32] *հացն ու գինին չեն կարող Հիսուս Քրիստոսի ճշմարիտ մարմինն ու արյունը լինել: Դրանք միայն խորհրդանիշեր են:*

Դժբախտաբար, բողոքականության այս տեսակետը չի արտահայտում Աստվածաշնչի վարդապետությունը, այլ այն մարդկանց կողմից սահմանված անհիմն տեսություն է: Ս. Պատարագի նման ըմբռնումը հակասուրբգրային է: Ավետարանում կարդում ենք, որ Հիսուս վերջին ընթրիքի ժամանակ հաստատեց Ս. Հաղորդության խորհուրդը, երբ «հացը վերցրեց, օրհնեց, կտրեց և տվեց աշակերտներին՝ ասելով. «Առե՛ք, կերե՛ք, այս է իմ մարմինը»: Եվ բաժակը վերցնելով՝ գոհություն հայտնեց, տվեց նրանց ու ասաց. «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է նոր ուխտի[33] *իմ արյունը*[34]*, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար» (Մատթեոս 26.26-28): Արդ, ինչպե՞ս կարելի է մերժել լույսի պես պայծառ այս իրողությունը: Երբ Հիսուս ասաց. «Եթե չուտեք մարդու Որդու մարմինը և չըմպեք նրա արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա: Ով ուտում է իմ մարմինը և ըմպում է իմ արյունը, հավիտենական կյանք ունի. և ես նրան վերջին օրը հարություն առնել պիտի տամ, քանի որ իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, և իմ արյունը՝ ճշմարիտ ըմպելիք» (Հովհաննես 6.54-55): Սակայն, «աշակերտներից*[35] *շատերը, երբ լսեցին, ասացին. «Խիստ է այդ խոսքը, ով կարող է այն լսել» (Հովհաննես 6.61): Հետևաբար չենք զարմանա, եթե այսօր էլ հայտնվեն մարդիկ, որոնք դժվարանան ըմբռնել այս խորհուրդը, բայց մենք դատապարտում ենք ոչ թե դրանց, այլ նրանց, ովքեր խեղաթյուրում են Հիսուսի խոսքերը: Հայ եկեղեցին առաքելական ժամանակներից մինչև այսօր միշտ հաստատ է պահել Ս. Հաղորդության խորհրդի քրիստոսահիմն հավատը:*

ՀԱՑ ԵՎ ԳԻՆԻ՞, ԹԵ՝ ՄԱՐՄԻՆ ԵՎ ԱՐՅՈՒՆ

Առարկություն 31.- Բայց ինչպե՞ս կարող է հացն ու գինին ստույգ Հիսուսի մարմինն ու արյունը դառնալ:

Հայ եկեղեցին իր հավատը երբեք «ինչպե՞ս»-ների վրա չի կառուցում: Նա գիտի, թե ի՞նչ է սովորեցրել Տերը եկեղեցուն և այդ էլ ընդունում է ու դավանում՝ խոնարհությամբ ու հավատով: Այդ պատճառով էլ Ս. Հաղորդությունը խորհուրդ է կոչվում: Եկեղեցին չի կարող այդ «ինչպե՞սը» ամբողջությամբ բացատրել, բայց խորունկ կերպով հավատում է, որ Քրիստոս, Ս. Հոգու գալստյամբ, ընդունում է մեր մատուցած ընծաները և Իր քավչարար մարմնով ու արյամբ հաղորդվում մեզ:

ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ ՄԱՐԴԱԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Առարկություն 32.- Բայց ինչո՞ւ է Քրիստոս ուզում մեզ կերակրել Իր մարմնով և արյունով: Դա մարդակերություն է:

Եթե Ս. Հաղորդության խորհուրդը մարդակերություն ես դիտում, ապա քո բողոքը ներկայացրու Հիսուսին, որովհետև նա պատվիրեց մեզ, որ ճաշակենք Իր մարմինն ու Իր արյունը (Հմմտ. Ղուկաս 22.19): Երբ հաղորդվում ենք Ս. Խաչի վրա Քրիստոսի պատարագված մարմնով և թափած արյունով, մասնակից ենք դառնում փրկագործության խորհրդի ներգործությանը: Այդպիսով Հիսուս մեզ կերակրում է Իր հարուցյալ կյանքով և մեզ միացնում է թե՛ Իրեն և թե՛ միմյանց:

ԱՂՈԹՔՆԵՐ ՆՆՋԵՑՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Առարկություն 33.- Ինչո՞ւ են հայ քրիստոնյաները աղոթում ննջեցյալների համար: Անիմաստ և ուշացած է մեռելների համար աղոթելը:

Հայ եկեղեցին սովորեցնում է, որ ամեն մարդ՝ ողջ թե մահացած, արժանի և ենթակա է Աստծու ողորմությանն ու գթությանը: Ամբողջ մարդկությունը՝ թե՛ քրիստոնյաները, թե՛ անհավատները, մի օր Աստծու դատաստանի առաջ են կանգնելու: Ըստ Պողոս առաքյալի «յուրաքանչյուրի գործը, ինչպես որ է, կրակը պիտի փորձի» (Ա Կորնթ. 3.13): Զմոռանանք նաև Հիսուսի զգուշացնող, սաստող խոսքերը. «Մարդիկ իրենց խոսած ամեն դատարկ բանի համար դատաստանի օրը հաշիվ պիտի տան» (Մատթեոս 12.36): Այդ պատճառով էլ, ննջեցյալների համար մեր աղոթքները ուղղում ենք Աստծուն, Արդար Դատավորին և խնդրում մեր եկեղեցու շարականի իմաստուն խոսքերով. «Ո՛վ Տեր, արդարությամբ մի՛ դատիր մեզ, այլ գթությամբ քավիր մեր մեղքերը»:

ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐՅՈՒՆՈՎ

Առարկություն 34.- Բայց չէ՞ որ քրիստոնյաները սրբված են Քրիստոսի արյունով:

Այո՛, դրան չենք հակաճառում: Մեր աղոթքն այն մասին է, որ մեղքերի մեջ մեռած քրիստոնյան Քրիստոսի թափած արյունով փրկության արժանանալու շնորհից չզրկվի: Մարդ չի կարող իրեն կատարելապես փրկված համարել, մինչև որ չժառանգի երկնքի թագավորությունը:

ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՐԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առարկություն 35.- Ինչո՞ւ է Ուղղափառ եկեղեցին հարձակվում մյուս հարանվանությունների հավատալիքների վրա:

Ընդհակառակը, նորաբույս հարանվանություններն են հարձակվում Հայ եկեղեցու վրա, ահա արդեն քսան դարերի պատմություն ունեցող ուղղափառ վարդապետության վրա: Հայ եկեղեցին ուրիշների վրա հարձակվելու կարիքն անգամ չունի, որովհետև քրիստոնեական հավատի և կյանքի լիությունը գտել է Քրիստոսի մեջ: Եթե հայ ժողովրդի զավակներից ոմանք և այլ քրիստոնյաներ հեռանում են այդ հավատից և կյանքից, ապա հայ եկեղեցու կոչումն է այդ մոլորվածներին ցույց տալ վերադարձի ճանապարհը: Այս սկզբունքի հիման վրա էլ, Հայ եկեղեցին միջեկեղեցական շրջանակներում համագործակցում է բոլոր այն քրիստոնյաների հետ, որոնք հավատի հիմնական սկզբունքներում համախոհ են:

ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՎԱՏԸ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԱԿԵՏԸ

Առարկություն 36.- Ըստ Հայ եկեղեցու ի՞նչ է կյանքի նպատակը:

Հայ եկեղեցին հավատում է, որ բոլոր մարդկանց կյանքի նպատակակետը, ի վերջո, Աստծու հետ վերամիացումն է թե՛ այս երկրի վրա և թե՛ հանդերձյալ կյանքում: Հոգևոր նոր ծնունդով, վերածնունդով Ս. Հոգին ստանում ենք Հիսուս Քրիստոսով մկրտվելով: Հայ եկեղեցու վարդապետությունը հիմնված է այս նախապայմանի և շատ պարզ ու հասկանալի ուսմունքի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայ քրիստոնյա լինելու համար բավարար չէ քրիստոնյա ծնողների զավակ լինելը, քրիստոնյա ընտանիքում ծնվելը: Եկեղեցին որևէ անհատի ազգային կամ հասարակական բարուրը չէ: Ուղղափառ հավատի կյանքով ապրելը ծիսական սովորությունների և արարողությունների շարան չէ, որի միջով անցնելով կարող ենք քրիստոնյա դառնալ (մկրտություն, Ս. Հաղորդություն, պսակ, ձեռնադրություն, մոմ վառել, խունկ ծխել և այլն): Բայց, մյուս կողմից էլ, չի կարելի քրիստոնյա դառնալ առանց հավատի փայլ հանդիսացող խորհուրդների և խորհուրդները դրսևորող արտաքին նյութական տարրերի: Օրինակ, սրբալույս մյուռոնով դրոշմվելը, Ս. Պատարագի մասը ճաշակելը, տունը օրհնել տալը և այլն: Հայ եկեղեցին մեզ հրավիրում է Աստծու Միածին Որդի՝ Հիսուս Քրիստոսով հաստատված հավատալից նոր կյանքի: Մենք Աստծու մեծ ընտանիքի անդամներ ենք, ընտանիք, որն ընդգրկում է երկինքն ու երկիրը: Ուրեմն, պարտավոր ենք Հայ եկեղեցու զավակներ լինելու մեր կոչումը գնահատել՝ որպես Ս. Հոգու տաճարները դարձած նորածին արարածներ:

Մեր ավետարանական ու բողոքական եղբայրներին և քույրերին ասում ենք. «Որպես Հայ եկեղեցու հավատացյալներ գնահատում ենք ձեր նախանձախնդրությունը Հիսուսի և Աստվածաշնչի հանդեպ, որը մերն է նաև: Սակայն ձեր վերաբերմունքը՝ որոշ վարդապետությունների հանդեպ, ձեր դատողությունների համակարգը չփոթության է մատնում:

Հայ եկեղեցու արարողությունները իմաստազուրկ և մեքենայական շարժումներով և ավելորդ ծառայություններով չեն կատարվում այլ՝ կենդանի, աշխույժ և խորիմաստ կյանքի արտացոլումներն են՝ քրիստոնյային Քրիստոսի բերելու ընդգծված հրամայականով: Խորհուրդ կտանք ձեզ, որ անկեղծ սիրով՝ թեկուզ արդար քննադատությամբ, մոտենաք Հայ եկեղեցուն և հաղորդակցվեք նրա հարուստ և հարստացնող ժառանգությանը, և ըստ այդմ գնահատեք Քրիստոսով ապրող և Քրիստոսի առաքյալների քարոզությամբ ու նահատակությամբ հիմնված այս պատմական և մշտանորոգ եկեղեցին: Անշահախնդիր կերպով քննարկեք Աստվածաշնչի և եկեղեցական ավանդության սովորեցրած վարդապետությունները և կհամոզվեք, որ դրանք փոխանակ իրար հակասելու՝ ամբողջացնում են միմյանց: Եկեղեցին Քրիստոսի խորհրդանշական մարմինն է, որ իր մեջ ընդգրկում է հավատացյալների լիագումար միությունը»:

ԲԱՌԱՐԱՆ

1. *Հայաստանյայց Առաքելական եկեղեցի:* Հայերի կամ հայաստանցիների եկեղեցու պաշտոնական անվանումն է, որը միաժամանակ ցույց է տալիս եկեղեցու առաքելական ծագումը, քանի որ Ս. Թադևոս և Ս. Բարթողոմեոս առաքյալները քրիստոնեությունը տարածեցին Հայաստանում և այնտեղ էլ նահատակվեցին: Մենք այս գրքույկում նախընտրել ենք օգտագործել «Հայ եկեղեցի» անվանումը, որը կրճատ ձևն է «Հայաստանյայց Առաքելական եկեղեցու»:
2. *Ուղղափառ:* Ուղիղ հավատ ունեցող: Ուղղափառ (Orthodox) եկեղեցի ասելով հասկանում ենք Հայ եկեղեցուն դավանակից Ասորի, Հաբեշ, Հնդիկ և Ղպտի եկեղեցիներին և քույր եկեղեցիներին, ինչպես Հույն, Ռուս, Վրաց եկեղեցիները:
3. *Ավանդություն:* Աստվածաշնչի շրջանակներում դրանք նշանակում են հասարակական և կրոնական այն դարավոր սովորությունները, որոնք պահպանվում էին հրեաների կողմից: Իսկ եկեղեցու պատմության ծիրում դրանք նշանակում են եկեղեցական հայրերի այն բոլոր ուսուցումները, որոնք կապ ունեն քրիստոնեական հավատի հետ և չկան Աստվածաշնչում ու չեն հակասում նրան:
4. *Աստվածաշունչ:* Աստվածային ներշնչումով գրված Սուրբ Գիրքը, որը բաղկացած է երկու մասից՝ Հին Կտակարանից և Նոր Կտակարանից:

5. *Փարիսեցի:* Քրիստոսի երկրային առաքելության ժամանակ հրեաների մեջ տարածված ամենամեծ կուսակցության անդամ: Նրանք հավատում էին, թե մովսիսական օրենքի տառացի գործադրությամբ միայն կարելի է հասնել փրկության, և ըստ այնմ, պահանջում էին օրենքի և նրա շուրջ եղած ավանդությունների խստիվ պահպանությունը:

6. *Առաքյալ:* Նշանակում է Քրիստոսի կողմից ուղարկված՝ առաքված պատգամաբեր: Հիսուս տասներկու առաքյալներ ընտրեց Իր սիրո վարդապետությունը աշխարհի չորս կողմերը տարածելու համար: «Եվ տասներկու առաքյալների անունները սրանք էին. առաջին՝ Սիմոն Պետրոս կոչվածը, և նրա եղբայրը Անդրեաս, Զեբեդիոսի որդի Հակոբոս և նրա եղբայրը Հովհաննես, Փիլիպպոս և Բարթողոմեոս, Թովմաս և Մատթեոս մաքսավոր, Ալփեոսի որդի Հակոբոս և Ղեբեոս, որ Թադեոս կոչվեց, Սիմոն Կանանացի և Հուդա Իսկարիովտացի, որ և մատնեց նրան»: (Մատթեոս 10.2-4): Հուդա Իսկարիովտացին Հիսուսին մատնելուց հետո զրկվեց իր առաքելական պատվից և նրա տեղը առաքյալ ընտրվեց Մատաթիան (Գործք 1.26): Առաքելական խմբին միացավ նաև Պողոսը, որը ճանաչվեց որպես տասներեքերորդ առաքյալ:

7. *Սուրբ:* Սուրբ բառը կարող ենք գործածել անձի, անասունի և առարկայի համար: Հիմնական իմաստը նշանակում է Աստծու համար նվիրված, Աստծուն առանձնացված, Աստծուն պատկանող: Նշանակում է նաև սրբագործված, մաքրված:

8. *Երկնքի Թագավորություն:* Հիսուս գործածել է նաև Աստծու թագավորություն ձևը: Երկուսն էլ նշանակում են Աստծու թագավոր լինելու իրողությունը և տիրապետությունը Իր կամքը ընդունողների և կատարողների վրա: Երկնքի թագավորություն մտնել կամ Աստծու թագավորություն ժառանգել նշանակում է հավիտենական կյանք ընդունել:

9. *Ս. Պոլիկարպոս:* Եփեսոսի եկեղեցու հայրապետը, ծնվել է 69 թվականին և նահատակվել՝ 155 թվականին:

10. *Ս. Օգոստինոս:* Աֆրիկայի եկեղեցու եպիսկոպոսը: ծնվել է 354 թվականին, վախճանվել՝ 430 թվականին:

11. *Ս. Աթանաս:* Ալեքսանդրիայի եկեղեցու հայրապետը, Ուղղափառ հավատի համար մարտնչող ամենահայտնի մարտիկը, ծնվել է 296 թվականին, վախճանվել՝ 373 թվականին:

12. *Ս. Հովհան Ոսկեբերան:* Կ. Պոլսի եկեղեցու պատրիարքը, հռչակավոր քարոզիչ, ծնվել է 347 թվականին, վախճանվել՝ 407 թվականին:

13. *Ընդհանրական:* Եկեղեցուն տրված ստորոգելիներից մեկը:

14. *Հարանվանություն:* Ընդհանրական եկեղեցու տարբեր-տարբեր խմբերը: Օրինակ, հայերը բաժանվում են երեք հարանվանությունների՝ Առաքելական (Լուսավորչական), Կաթողիկե (Կաթոլիկ) և Ավետարանական (Բողոքական):

15. *Գնոստիկ:* Ծագում է հունարեն արմատից, որը թարգմանվում է գիտություն: Հիմնականում Բ դարում ձևավորված աղանդ է, ոչ-ուղղափառ «եկեղեցի»:

16. *Արիոսականություն:* Արիոսի հերետիկոսությունը, սխալ ուսուցումը այն մասին, թե Քրիստոս հավասար չէ Հայր Աստծուն: Արիոսը ծնվել է 250 թվականին և վախճանվել՝ 336 թվականին:

17. *Տիեզերական ժողովներ:* Հայ եկեղեցին ընդունում է երեք Տիեզերական ժողովներ. Նիկիայի՝ 325 թ., որտեղ դատապարտվեց Արիոսը, Կ. Պոլսի՝ 381 թ., ուր դատապարտվեց Մակեդոնը, որը մերժում էր Ս. Հոգու աստվածությունը և Եփեսոսի՝ 431 թ., ուր դատապարտվեց Նեստորը, որը բաժանում էր Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունները և հրաժարվում էր ասել, թե Ս. Կույսից ծնվածը Աստված է: Ու այդպիսով նա մերժում Ս. Կույս Մարիամի «Աստվածածին» տիտղոսը, որը ճանաչեց և դավանեց Ընդհանրական եկեղեցին: Այս երեք ժողովները կոչվում են Տիեզերական, որովհետև ընդունվել են բոլոր եկեղեցիների կողմից:

18. *Քերովբե:* Հրեշտակների խումբ է, որ ընդհանրապես հիշվում է սերովբեների հետ միասին:

10. *Ուխտի տապանակ:* Կոչվում է նաև Տիրոջ տապանակ կամ Աստծու տապանակ: Ոսկեպատ փայտե տապան էր, որի կափարիչը կոչվում էր Քավություն: Տապանակը խորհրդանշում էր Աստծու աթոռը և ներկայությունը, և ժողովրդի մեղքերը քավելու համար սահմանված զոհերի արյունը սրսկվում էր նրա առաջ: Տապանակի մեջ պահվում էր տասնաբանյա պատվիրանների զույգ տախտակները, Ահարոնի ծաղկած գավազանը և մանանայով լեցուն ոսկյա սափորը (տե՛ս Եբր. 9.4):

20. *Օրենք:* Աստվածաշնչում ամփոփված Աստծու պատվիրանների ամբողջությունը: Այս անունով են կոչում նաև Ս. Գրքի առաջին հինգ գրքերը:

21. *Զոհ կամ Զոհաբերություն:* Աստվածաշնչում զոհը Աստծուն տրված նվերն է, որ հաճախ կոչվում է պատարագ կամ ընծա: Նոր Կտակարանում խաչի վրա Քրիստոսի կամավոր մահը համարվում է Աստծուն ընծայված կատարյալ և գերագույն զոհաբերությունը: Դա Քրիստոսի պատարագվելն է մեր մեղքերի քավության համար:

22. *Տասներկու առաքյալների վարդապետությունը:* Նախնի եկեղեցու քրիստոնեական վարդապետությունները բովանդակող գրվածք է, որի հեղինակը, գրության թվականն ու վայրը անհայտ են:

23. *Ավետարանական եկեղեցի:* Բողոքական եկեղեցու հարանվանություններին տրված անունը:

24. *Երախա:* Զմկրտված անձ: Զշփոթել երեխա բառի հետ:

25. *Ժամերգություն:* Հայ եկեղեցին ունի յոթ ժամերգություններ, աղոթքի պահեր. գիշերային, առավոտյան, արևագալի, ճաշու, երեկոյան, խաղաղական, հանգստյան:

26. Կաթողիկե: Հռոմեական Կաթողիկե եկեղեցու և նրա հովանու տակ գտնվող եկեղեցիների պաշտոնական անունն է:

27. Անգլիկան: Անգլիայի եկեղեցու և նրա հովանու տակ գտնվող եկեղեցիների պաշտոնական անունը: Հայտնի է նաև եպիսկոպոսական եկեղեցի անունով:

29. Լյութերական: Բողոքական շարժման հիմնադիր Մարտին Լյութերի (1483–1546) անունը կրող բողոքական հարանվանություններին տրվող անունը:

30. Մեթոդիստ: Չարլզ և Ջոն Վեսլի եղբայրների կողմից 18-րդ դարում սկիզբ դրած հարանվանություն:

31. Մկրտչական: 17-րդ դարում ծագած բողոքական հարանվանություն:

32. Վերջին ընթրիք: Նախքան խաչվելը Քրիստոս Երուսաղեմում, Վերնատանը կատարեց Վերջին ընթրիքը, ուր հաստատեց Ս. Հաղորդության խորհուրդը:

33. Ուխտ և Նոր Ուխտ: Ընդհանուր իմաստով բառը նշանակում է դաշինք, համաձայնություն, պարտավորություն: Մասնավոր իմաստով գործածվում է նշելու համար այն կապը, որն Աստված հաստատում է ընդհանուր մարդկության և կամ առանձին մարդկանց հետ: Ցուրաքանչյուր ուխտ հիմնվում է խոստումի վրա և կնքվում է զոհի արյունով: Քրիստոս Իր զոհագործական մահվամբ և հարությամբ Նոր Ուխտ կնքեց մարդկության հետ, որը մեր փրկության խոստումն է:

34. Տիրոջ արյունը: Խաչի վրա թափած Հիսուսի արյունը, որը մեր մեղքերի քավության և հավիտենական կյանքի խորհրդանիշն է:

35. Աշակերտ: Ավետարաններում այս անունը տրվում է Հիսուսի Տասներկու առաքյալներին կամ Ցոթանասուներկու աշակերտներին, իսկ ընդհանրապես՝ Իր քարոզությունը ընդունողներին: Աշակերտ բառով բնորոշում են նաև բոլոր քրիստոնյաներին:

36. Ննջեցյալ: Մահացած մարդկանց տրված անվանումը, որը նշանակում է, թե նրանք ժամանակավորապես քնած են և Քրիստոսի Երկրորդ գալստյան ժամանակ պիտի արթնանան, հարություն առնեն:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆԻ ԿԱՆՈՆԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

	Հապավումը
Ծննդոց	Ծննդ.
Ելք	Ելք
Ղևտական	Ղևտ.
Թվեր	Թվեր
Երկրորդ Օրենք	Բ Օր.
Հեսու	Հեսու
Դատավորներ	Դատ.
Հռութ	Հռութ
Թագավորություններ Ա	Ա Թագ.
Թագավորություններ Բ	Բ Թագ.
Թագավորություններ Գ	Գ Թագ.
Թագավորություններ Դ	Դ Թագ.
Ա Մնացորդաց	Ա. Մնաց.
Բ Մնացորդաց	Բ. Մնաց.
Եզր	Եզր
Նեեմիա	Նեեմ.
Եսթեր	Եսթ.
Հոբ	Հոբ
Սաղմոսներ	Սաղմ.
Առակներ	Առակ.
Ժողովող	Ժող.
Երգ Երգոց	Երգ

Եսայու մարգարեություն	Եսայի
Երեմիայի մարգարեություն	Երեմիա
Ողբ Երեմիայի	Ողբ
Եզեկիելի մարգարեություն	Եզեկ.
Դանիելի մարգարեություն	Դանիել
Ովսիայի մարգարեություն	Ովսիա
Հովելի մարգարեություն	Հովել
Ամոսի մարգարեություն	Ամոս
Աբդիուի մարգարեություն	Աբդիու
Հովնանի մարգարեություն	Հովնան
Միքիայի մարգարեություն	Միքիա
Նավումի մարգարեություն	Նավում
Ամբակումի մարգարեություն	Ամբ.
Սոփոնիայի մարգարեություն	Սոփ.
Անգեի մարգարեություն	Անգե
Զաքարիայի մարգարեություն	Զաքար.
Մաղաքիայի մարգարեություն	Մաղաք.

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՆՈՆԻ ՄԵՋ ՄՏԱԾ ԳՐՔԵՐ, ՈՐՈՆՔ ՈՐՈՇ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՆ «ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆՈՆ» ԿԱՄ «ՊԱՐԱԿԱՆՈՆ»

Առաջին գիրք Եզրի	Ա Եզրի
Երկրորդ գիրք Եզրի	Բ Եզրի
Հուդիթ	Հուդիթ
Տոբիթ	Տոբիթ
Առաջին գիրք Մակաբայեցիների	Ա Մակ.
Երկրորդ գիրք Մակաբայեցիների	Բ Մակ.
Երրորդ գիրք Մակաբայեցիների	Գ Մակ.
Իմաստություն Սողոմոնի	Իմաստ.
Բարուք	Բարուք

Սիրաք.....Սիրաք
Աղոթք Մանասեի.....Մանասե

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ավետարան ըստ Մատթեոսի .....Մատթեոս
Ավետարան ըստ Մարկոսի.....Մարկոս
Ավետարան ըստ Ղուկասի .....Ղուկաս
Ավետարան ըստ Հովհաննեսի.....Հովհաննես
Գործք Առաքելոց.....Գործք
Թուղթ Հռոմեացիներին.....Հռոմ.
Առաջին թուղթ Կորնթացիներին.....Ա Կորնթ.
Երկրորդ թուղթ Կորնթացիներին.....Բ Կորնթ.
Թուղթ Գաղատացիներին .....Գաղատ.
Թուղթ Եփեսացիներին .....Եփես.
Թուղթ Փիլիպեցիներին .....Փիլիպ.
Թուղթ Կողոսացիներին.....Կողոս.
Առաջին թուղթ Թեսաղոնիկեցիներին.....Ա Թեսաղ.
Երկրորդ թուղթ Թեսաղոնիկեցիներին....Բ Թեսաղ.
Առաջին թուղթ Տիմոթեոսին .....Ա Տիմ.
Երկրորդ թուղթ Տիմոթեոսին.....Բ Տիմ.
Թուղթ Տիտոսին .....Տիտոս
Թուղթ Փիլիմոնին.....Փիլիմոն
Թուղթ Եբրայեցիներին.....Եբր.
Հակոբոսի ընդհանրական թուղթը .....Հակոբոս
Պետրոսի առաջին թուղթը.....Ա Պետրոս
Պետրոսի երկրորդ թուղթը.....Բ Պետրոս
Հովհաննես առաքյալի առաջին թուղթը..Ա Հովհ.
Հովհաննես առաքյալի երկրորդ թուղթը..Բ Հովհ.
Հովհաննես առաքյալի երրորդ թուղթը ...Գ Հովհ.
Հովհաննեսի Հայտնությունը .....Հայտն.

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՑՈԹԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Խորհուրդ նշանակում է անտեսանելի երևույթների հայտնությունը և այն իրագործող արարողությունը: Խորհուրդը ըմբռնում ենք հավատով և երկյուղածությամբ: «Խորհուրդները հոգևոր ազդակներ և միջոցներ են քրիստոնյաների համար՝ միշտ մնալու համար աստվածային շնորհի մեջ և հոգևոր կյանքը ապրելու բարձրության վրա, գործով ցույց տալու, թե Հիսուս Քրիստոսով ավետարանված փրկությունը հոգևոր իրականություն է եղել հավատացյալների համար՝ իրենց հավատի մեջ և կյանքում» (ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ, էջ 52):

- Մկրտություն. հավատի խորհուրդն է: Հավատում ենք և մկրտվում ենք:

- Դրոշմ. հույսի խորհուրդն է: Ս. Հոգու զորության վրա մեր հույսը դնելով, կարողանում ենք դիմադրել թշնամուն՝ սատանային:

- Ապաշխարություն. արդարության խորհուրդն է: Զղջումով, խոստովանությամբ և ապաշխարությամբ արդարանում ենք մեր մեղքերից:

- Հաղորդություն. սիրո խորհուրդն է: Սիրով ենք միանում մեր գլուխը հանդիսացող Քրիստոսին՝ որպես Նրա մարմնի անդամներ:

- Պսակ ամուսնության. ողջախոհության խորհուրդն է: Ողջախոհ ամուսնությամբ կարողանում ենք զսպել բղջախոհ ցանկությունը, հեռու մնալ շնությունից և պոռնկությունից ու ապրել ընտանեկան մաքուր կյանքով:

– Զեռնադրություն. խոհեմության ու գիտության խորհուրդն է: Զեռնադրյալ անձը խոհեմությամբ և գիտությամբ է վարում իր կյանքը, խորհուրդները մատակարում և քարոզում Տիրոջ պատգամները:

– Կարգ հիվանդաց և Վերջին օծում. արդարության և լրումի խորհուրդն է: Կյանքի պատերազմից դուրս գալով՝ մեռնելով, արդարների հանգստի ժառանգորդ ենք դառնում:

ՎԵՐՋԱԲԱՆ

«Զգո՛ւյշ եղեք ինքներդ ձեր և ամբողջ հոտի համար, որի վրա Սուրբ Հոգին տեսուչներ կարգեց ձեզ՝ հովվելու համար Տիրոջ ժողովրդին, որին նա փրկեց իր արյունով: Սակայն ես գիտեմ, որ իմ մեկնելուց հետո ձեր մեջ կգան հափշտակիչ գայլեր, որոնք չեն խնայի հոտին: Ձեր միջից էլ դուրս կգան մարդիկ, որ թյուր բաներ կխոսեն՝ աշակերտներին իրենց ետևից քարշ տալու համար: Դրա համար էլ արթո՛ւն կացեք և հիշե՛ք, որ ամբողջ երեք տարի, գիշեր-ցերեկ, առանց դադարի յուրաքանչյուրիդ մեկ-մեկ՝ արցունքներով խրատեցի: Եվ արդ, ձեզ հանձնում եմ Աստծուն և նրա շնորհի խոսքին, նրան, որ կարող է բարձրացնել և ձեզ ժառանգություն տալ՝ բոլոր սրբերի հետ: Ձեզնից ոչ ոքի արծաթը կամ ոսկին կամ զգեստը չցանկացա. դուք ինքներդ գիտեք, որ իմ և ինձ հետ եղողների կարիքները հոգացին այս ձեռքերը: Ես իմ օրինակով ամեն ինչ ձեզ ցույց տվեցի, որովհետև այդպես պետք է աշխատել և դարմանել հիվանդներին ու հիշել Տեր

Հիսուսի խոսքը, որ ինքն իսկ ասաց. "Երանելի՛ է մանավանդ տալը, քան առնելը"»:

Այս բաներն ասելուց հետո բոլորի հետ մեկտեղ ծնկի գալով՝ սկսեց աղոթել»:

(Գործք 20.28-36)

Սիրելի ընթերցող,

Պողոս առաքյալի այդ վկայությամբ և աղոթաձայն խոսքերով ավարտում եմ այս գրքույկը: Միայն, առաքյալի այդ պերճախոս հրահանգների վրա ավելացնում եմ մեկ այլ խրախուսող պատգամ ևս.

«ՄԻ՛ ՊԱՐՏՎԻՐ ՁԱՐԻՑ,
ԱՑԼ՝ ԲԱՐԻՈՎ ՀԱՂԹԻՐ ՁԱՐԻՆ»
(Հռոմ. 12.21):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ (գրաբար), Վիեննա, Մ. Գրոց ամերիկեան ընկերութիւն, 1929:*
2. *ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ (աշխարհաբար),* International Bible Association, Box 225646 Dallas, Texas 75265m 1981*:*
3. *ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ (աշխարհրաբար), Անթիլիաս, 1993:*
4. *ԺԱՄԱԳԻՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ, Անթիլիաս, 1986:*
5. *Բաբգէն Կաթողիկոս, ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ, Կաթողիկոսութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ, 1971:*
6. *Թորգոմ պատրիարք Գուշակեան, ՍՈՒՐԲՔ ԵՒ ՏՕՆՔ, Կաթողիկոսութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ, 1981:*
7. HOLY BIBLE "THE BREADTH OF GOD" (Armenian Church edition), American Bible Society, N. Y. c. 1994.
8. David Hugh Farmen, THE OXFORD DICTIONARY OF SAINTS, Oxford University Press, c. 1987.
9. THE OXFORD DICTIONARY OF THE CHRISTIAN CHURCH, Edited by F. L. Cross, Second Edition by F. L. Cross and E. A. Livingstone, Oxford University Press, c. 1958.
10. Irving Hexman, CONCISE DICTIONARY OF RELIGION, InterVarsity Press, Downers Grove, Illionis 60515, c. 1993.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ՈՉ-ՈՒՂՂԱՓԱՌ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 43

ԲԱՌԱՐԱՆ 45

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՑԱՆԻ ԿԱՆՈՆԸ 52

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՑՈՒՑԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ 55

ՎԵՐՋԱԲԱՆ 56

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 58

ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵԷՄԵԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ՈՉ ՈՒՂՂԱՓԱՌ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Շարվածքը և էջադրումը՝ Ս. Մալայանի
Սրբագրող՝ Ֆ. Կարապետյան

Շապիկի նկարը՝
Սբ. Գրիգոր Լուսավորիչ, XVIII դ. երկրորդ կես, անհայտ հայ նկարիչ, Սբ. Էջմիածին

Ստորագրված է տպագրության՝ 20.01.09 թ.: Չափսը 84x108 1/32:
Թուղթ՝ օֆսեթ: Հրատ. 3.1 մամուլ, տպագր. 2.06 մամուլ = 3.5 պայմ. մամուլի: Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 108:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52

«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հովանավորությամբ Երևանի համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել հետևյալ գրքերը

1. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, 1998:
2. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4, 1998:
3. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 5, 2001: (Բառարանը 2002 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիստական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտություն-ների զարգացման բնագավառում ծեռք բերված նվաճումների համար»):
4. **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ** - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Վ. Վարդանյանը), 2000 թ.:
5. **Հրաչյա Գաբրիելյան** - Հայկական լեռնաշխարհը, 2000 թ.:
6. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայերենի հոլովները, 2000 թ.:
7. Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, աշխատասիրությամբ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի, Եր., 2001 թ.:
8. Շարական (ժողովածու) - Աշխարհաբարի վերածեցին **Ա. Մադոյանը և Գ. Մադոյանը**, 2001 թ.:
9. **Հրաչյա Միրզոյան** - Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, 2001 թ.:
10. **Ռուբեն Ղազարյան** - Միջին գրական հայերենի բառապաշարը, 2001 թ.:
11. **Բարկեն Հարությունյան** - Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», 2001 թ.:
12. **Վարդան Արևելցի** - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Գ. Թոսունյանը), 2001 թ.:
13. **Գևորգ Մադոյան** - Գրիգոր Անավարզեցին շարականագիր, 2001 թ.:
14. **Գևորգ Աբգարյան** - Հայ տպագրության նախապատմություն, 2001 թ.:

15. **Փայլակ Անթապյան** - Հովհաննես սարկավագ Իմաստասեր, 2001 թ.:
16. **Յոզեֆ Կարստ** - Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, 2001 թ.:
17. **Ռաֆայել Մաթևոսյան** - Կուբան ապագայի որոնումներում. իրադարձություններ և դասեր, 2001 թ.:
18. **Խաչիկ Բաղիկյան** - Ուսումնական դարձվածաբանական բառարան, 2002 թ.:
19. **Հրաչյա Գաբրիելյան** - Հայոց բնաշխարհը (դասագիրք), 2002 թ.:
20. **Էդուարդ Աղայան** - Լեզվաբանական հետազոտություններ, 2003 թ.:
21. **Արտակ Մովսիսյան** - Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը, 2003 թ.:
22. **Հրաչյա Աճառյան** - Քննություն Կիլիկիայի բարբառի, 2003 թ.:
23. **Պիոն Հակոբյան** - Գիտական ուսումնասիրություններ, 2003 թ.:
24. **Աշոտ Սուքիասյան** - Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիստական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումների համար»), 2003 թ.:
25. **Երջանիկ Գևորգյան** - Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան (Շարժութարան), 2003 թ.:
26. **Հայնրիխ Հյուբշման** - Հայերենի քերականություն, առաջին մաս, Հայերենի ստուգաբանություն, 2003 թ.:
27. **Հայնրիխ Հյուբշման** - Հայագիտական ուսումնասիրություններ, 2004 թ.:
28. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայոց լեզվի քերականություն (Ձևաբանություն) 2004 թ.:
29. **Ռամազ Գորգաձե** - Հայերեն-վրացերեն զրուցարան, 2004 թ.:
30. «Ժուռնալ Ազիատիկ» հանդեսի հայագիտական նյութերի ծանոթագրված մատենագիտություն, 2004 թ. (ռուսերեն):
31. **Հրաչյա Աճառյան** - Հայոց պատմություն, հյուսված ընդհանուր պատմության հետ, 2004 թ.:
32. **Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէր** - Լուծմունք «Սահմանաց գրոց», 2004 թ.:
33. **Սանդրո Սարդարյան** - Հայաստանը քաղաքակրթության օրրան, 2004 թ.:
34. **Կարէն Իւզբաշեան** - Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը, 2005 թ.:
35. **Հարություն Դելլալյան** - Ժողովածու, 2005 թ.:
36. **Բախտիար Հովակիմյան** - Հայոց ծածկանունների բառարան, 2005 թ.:
37. **Գառնիկ Անանյան** - Ակնարկներ հայոց հին և միջնադարյան հրապարակախոսության, 2005 թ.:
38. **Վահան Տեր-Ղևոնդյան** – Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները (1145-1226 թթ.), 2005 թ. (ֆրանսերեն):
39. **Գառնիկ Ստեփանյան** – Երգնկա (Հնագույն դարերից մինչև մեր օրերը), 2005 թ.:
40. **Հրաչյա Աճառյան** - Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների. Իմաստաբանություն, Բառաքննություն, Շարահյուսություն, 2005 թ.:
41. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 16-րդ հատոր: Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր: Ներածությունը և բնագրերից թարգմանությունները **Արամ Տեր-Ղևոնդյանի**, 2005 թ.:
42. **Սահակ Բազյան** - Խաչատուր Աբովյանը առակախոս-բանաստեղծ և դրամատուրգ, 2005 թ.:
43. **Ռամազ Գորգաձե** - Վրացերեն-հայերեն բառարան, 2005 թ.:
44. **Պավել Շարաբխանյան** - Հանգաբանություն, 2005 թ.:
45. **Ռուբէն Ղազարեան** - Գրաբարի հոմանիշների բառարան, 2006 թ.:
46. Գրիգոր Զօհրապը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում: Աշխատասիրութեամբ **Ալբերտ Շարուրեանի**, 2006 թ.:
47. **Նիկողայոս Ադոնց** - Երկեր, հինգ հատորով, հատոր Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, 2006 թ:
48. **Հ. Պօղոս Գոճանեան** - Ուղեցոյց դասական ուղղագրութեան, 2006 թ.:
49. **Հայկազ Ժամկոչյան** - Հայ ժողովրդի պատմություն, 2006 թ.:
50. Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ: Աշխատությամբ **Ս. Հարությունյանի**, 2006 թ.:
51. **Սաթենիկ Գեջյան** - Անի: Մատենագիտություն, 2006 թ.:
52. **Հարություն Մ. Վենետիկյան, Ջերալդ Ա. Ուորֆիլդ** - Համաշխարհային առևտրի ֆինանսավորում, 2006 թ.:

53. **Շահէ Արքեպիսկոպոս Անէմեան,** Հայերէն Աստուածաշունչը, 2006 թ.:
54. LA MINIATURE ARMENIENNE - Collection du Matenadaran, 2006 թ., «Նաիրի» հրատարակչության հետ համատեղ
55. Արևելագիտության հարցեր (Հոդվածների ժողովածու, հատոր VI), 2006 թ.:
56. **Հակոբ Սիմոնյան** - Վերին նավեր, գիրք Ա, (1976-1990 թթ. պեղումների արդյունքները), 2006 թ.:
57. **Նիկողայոս Ադոնց** - Երկեր, հինգ հատորով, հատոր Բ, Պատմաբանասիրական ուսումնասիրություններ, 2006 թ.:
58. **Լիլիթ Զաքարյան** - Աղջոց սուրբ Ստեփանոս, 2007 թ.:
59. **Ալբերտ Խաչատրյան** - Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), 2007 թ.:
60. Մատենագիրք Հայոց - մատենաշար, Զ հատոր, Ը դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
61. Մատենագիրք Հայոց - մատենաշար, է հատոր, Ը դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
62. Մատենագիրք Հայոց, մատենաշար, Ը հատոր, Շարական, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
63. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (Հնագույն ժամանակներից մինչև Ք. հ. 298 թվականը), հատ. 1, 2007 թ.:
64. **Ռուբեն Ղազարեան, Հենրիկ Ավետիսեան** - Նորայայտ բառեր գրաբարում, 2007 թ.:
65. **Ֆելիքս Հայրապետյան** - Ֆենոլոգիայի հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարան, 2007 թ.:
66. **Արմէն Մալխասեան** (կազմող) - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Գ, 2007 թ.:
67. **Դենի դը Ռուժմոն** - Սերը և Արևմուտքը (թարգմ. **Ալ. Թոփչյանի**), 2007 թ.
68. **Սերոբ Ղազարյան** - Հայոց լեզվի պատմություն, 2007 թ.:
69. **Լաւրենտի Ցովհաննիսեան** - Հայ թարգմանական գրականութեան բառապաշարը (V դար), Ազգային Մատենադարան, հ. Մխ, 2007 թ.:
70. **Համաստեղ** - Մոռացված էջեր, հատոր Դ, 2007 թ.:
71. **Գրիգոր Միքայելյան** - Կիլիկիայի հայկական պետության պատմություն, 2007 թ.:
72. **Նիկողայոս Ադոնց** - Երկեր, հինգ հատորով, հատոր Գ, Հայերենագիտական ուսումնասիրություններ, 2008 թ:
73. **Անլիտա Դոլուխանյան** - Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, 2008 թ.:
74. **Ստեփան Պողոսյան** - Պատմագիտական ուսումնասիրություններ, 2008 թ.:
75. **Ժիրայր Անանյան** - Պիեսներ, Ընտրանի, 2008 թ.:
76. Մատենագիրք Հայոց - մատենաշար, Թ հատոր, Թ դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2008 թ.:
77. Մատենագիրք Հայոց - մատենաշար, ԺԲ հատոր, Ժ դար Գրիգոր Նարեկացի, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2008 թ.:
78. Մատենագիրք Հայոց - մատենաշար, ԺԳ հատոր, Գանձեր I մաս, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2008 թ.:
79. Մատենագիրք Հայոց - մատենաշար, ԺԴ հատոր, Գանձեր II մաս, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2008 թ.:
80. **Խաչիկյան Լևոն** - Աշխատություններ, հատոր Գ, («Նաիրի» հրատարակչության հետ համատեղ), 2008 թ.:
81. **Հարությունյան Հ. Մ.** - Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ., 2008 թ.:
82. **Գրիգոր Ղափանցյան** - Արմատական բառարանի առթիվ դիտողություններ, Ара Прекрасный мифотворческий образ у армян, 2008 թ.:
83. **Բարկեն Հարությունյան** - Խորհրդահայ թատրոնի տարեգրություն, հատոր III, 2008 թ.:
84. **Վահրամ Ղարախանյան** - «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայանպաստ գործունեությունը. 1956-2006 թթ., 2008 թ.:
85. **Ավետիք Իսահակյան** - Երկերի լիակատար ժողովածու, հատոր IV - Պոեմներ, 2008 թ.:
86. **Հրաչյա Հարությունյան** - Շուշի, XVIII-XIX դդ. տապանագրեր, 2008 թ.:
87. **Գառնիկ Ստեփանյան** - Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության, Գիրք 2, Ամերիկահայ թատրոնի պատմություն, 2008 թ.:
88. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Դ., 2008 թ.:
89. **Ալեքսեզեան Նարեկ եպս.** - Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ պատասխանները ոչ-ուղղափառ առարկութիւններու, 2009 թ.: